Եղիշե Չարենց

Ես մե հարբած դուքանդար եմ...

Ես մե հարբած դուքանդար եմ դուքանիս մեջ բան չմնաց,
Ամենքի հետ սեղան նստա՝ սուլթան, վեզիր, խան չմնաց,
Ամենայն տեղ գովքդ արի, տաղեր ասի՛ դրախտային
Էլ ի՞նչ ասեմ սիրեկանին՝ գոգալ, հոգի, ջա՛ն չմնաց:

Թողի ամենն, ինչ ունեի՝ կյանքս դարձավ հովի նման,
Էշխդ ելավ, ճամփես կտրեց՝ Հնդստանի ծովի նման,
Հարբած՝ խալխի նոքար դարձա աշուղ Սայաթ-Նովի նման,
Կարոտ կեցա հրամանիդ՝ ուրիշ հրաման չմնաց:

Ես մե հարբած դուքանդար եմ դուքանիս մեջ բան չմնաց,
Էլ ի՞նչ ասեմ սիրեկանին գոգալ, հոգի, ջա՛ն չմնաց: